ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

14.01.2019
344-25

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարանի
ռեկտոր տիկին Կարինե Հարությանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Հարությանյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն էր դիմել ԵՊԼՀ-ի «Կոնֆուցիուսի ինստիտուտի» տնօրեն Գոռ Սարգսյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: Գ. Սարգսյանը զեկուցագրով Ձեզ է դիմել 2019 թվականի օգոստոսի 5-ին, ապա չստանալով լիարժեք արձագանք, կրկին արդեն նոր հարցադրումներով դիմել է սեպտեմբերի 26-ին: Սակայն չի ստացել իրեն անհրաժեշտ տեղեկությունները՝ ինչի հետևանքով խախտվել է իր տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքը: ԻԱԿ-ի՝ 2019 թ.-ի հոկտեմբերի 31-ի հարցմանն ի պատասխան ստացված պատասխան գրությունը ևս չէր տրամադրում պահանջվող ողջ տեղեկությունները: Միայն 2019 թվականի նոյեմբերի 4-ին ի պատասխան զեկուցագրի Գոռ Սարգսյանին տրամադրվել է excel ֆայլ, որը սակայն, չի կարող հանդիսանալ ամբողջական և հիմնավորված տեղակտվության տրամադրում, հատկապես, որ տրամադրված տեղեկության մի մասը կապ չունի ԿԻ գործունեության հետ:

Ուստի ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք Ինֆորմացիայի ազատության կենտրոնին կամ Գոռ Սարգսյանին տրամադրել հետևյալ տեղեկությունները:

1. Ի՞նչ իրավական հիմնավորմամբ է Գոռ Սարգսյանի՝ 2019 թվականի օգոստոսի 5-ի զեկուցագիրը շուրջ 3 ամիս մնացել անպատասխան:
2. ԿԻ ծախսային 11815000773001 ենթահաշվի բանկային քաղվածքից մայիսի 10-ին ելք է արվել 4,603,595.70 ՀՀ դրամ՝ «համալրում այլ բանկերից վճարված ԿԻ ծախսեր» մեկնաբանությամբ: Տրամադրեք 4,603,595.70 ՀՀ դրամ՝ «համալրում այլ բանկերից վճարված ԿԻ ծախսերի» հաշվապահական հիմք հանդիսացող փաստաթղթերը և դրանց հիմքերը:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան